

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.06.2021թ. թիվ 2112844284 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 15 >> 06 2021թ. 7-13- 9567

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Սուրիկ Հակոբյանի ՄԴ/47557-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

### Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Չարենցի 2 նրբանցքի 55 տան բնակիչ Սուրիկ Հակոբյանը դիմումով խնդրել է նվազեցնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.06.2021թ. թիվ 2112844284 որոշման տուգանքի չափը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.06.2021թ. թիվ 2112844284 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Չափումների միասնականության ապահովման մասին>> օրենքի պահանջներով պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում շահագործվող բոլոր արագաչափ սարքերը սահմանված ժամկետում և կարգով ստուգաչափված են, հետևաբար, սահմանված արագության գերազանցման փաստը դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված լինելու հանգամանքը չի կարող կասկածի տակ դրվել, **քանի որ լուսանկարում նշված է տրանսպորտային միջոցի երթևեկության գոտին, ուղղությունը և այլն:**

Ըստ արագաչափ սարքի տեխնիկական բնութագրի՝ այն փոխադրամիջոցը, որի արագությունը համարվում է չափված, պետք է առնվազն մասամբ գտնվի **նկարի երրորդ քառորդում՝** ընթացքի ուղղությամբ (**գնահատման գոտի**): Գնահատման գոտում չպետք է լինի միևնույն ուղղությամբ շարժվող որևէ այլ փոխադրամիջոց՝ նույնիսկ մասամբ: **Հակառակ ուղղությամբ շարժվող փոխադրամիջոցները կարող են գտնվել գնահատման գոտում:**

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 68-րդ կետի համաձայն՝ բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ, իսկ այն տարածքներում, որոնց մուտքն ու ելքը նշված են 5.21՝ «Բնակելի գոտի» և 5.22՝ «Բնակելի գոտու վերջ» նշաններով, ինչպես նաև բակային տարածքներում՝ 20 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով գերազանցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:

Վիճարկվող որոշման հիմքում դրված լուսանկարի ուսումնասիրությամբ պարզվել է, որ չի կարող կասկածի տակ դրվել իրավախախտումը հենց դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցով կատարելու փաստը, քանի որ լուսանկարի գնահատման գոտում պատկերված է նշված ուղղությամբ երթևեկող միայն վերջինիս պատկանող «MERCEDES-BENZ» մակնիշի 34R0788 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը:

Հարկ է նշել նաև, որ իրավախախտումը կատարվել է Վերին Պտղնի գյուղի հատվածում, ուստի դիմումատուն պարտավոր էր պահպանել ՀՀ կառավարության «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործման արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին» 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 68-րդ կետով սահմանված՝ բնակավայրերում 60 կմ/ժ ոչ ավել արագությամբ երթևեկելու ընդհանուր կանոնը:

Ինչ վերաբերվում է հնարավորին չափով տուգանքը քսացնելու մասին դիմումատուի խնդրանքին, ապա հարկ է նշել, որ որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Վերին Պտղնի գյուղի հատվածում տեղադրված արագաչափ սարքով արձանագրվել է դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցի արագությունը՝ 78 կմ/ժ, հանելով արագաչափ սարքի հնարավոր սխալանքի 10 կմ/ժ չափը, գերազանցել է երթևեկության սահմանված արագությունը 8 կմ/ժ-ով, ինչի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է վարչական պատասխանատվություն, հետևաբար վարչական տույժ նշանակելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.06.2021թ. թիվ 2112844284 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Սուրիկ Հակոբյանին:



Ե. Կարապետյան